

ԱՐԱ
ԱՄՈ
ԿՐԵՑԻԵՆ, ԳԵՏԵԿԻԵՆ, ԲԵԿԻԵՆ

ԱՐԱԿՈՒՐ

РУССКАЯ КНИГА

1873

ՏՐԻ ԵՎ ՅԱՆԿԱՐ 31

ԿՐՈՆԱԿԱՆ

ԵՐԹՆ ԽՈՐՀՈՒԹՅԱՔ ԵԿԵՂԵՑԻՈՅ

(६ -५ -४ -३ -२ -१ -० -८ -७ -६ -५ -४ -३ -२ -१ -०)

በኩረስ ማተሚያ

Վկրտութիւնն է լուսցու մն կամ՝ ընկըզմումն ի ջուր՝ Արրոյ Խըրորդութեան անուանքը՝ զերեխայս ի սկզբնական (, իսկ դշտիահասեալս ի սկզբնական և ի ներդուածական) մեղաց մաքրելոյ և արտարացուցանելոյ աղաղաւ, որով մկրտեալք կը սրբուին և կհոգեզպարդուին Վաստածային շնորհօք Կոր Աւետիս Քրիստոսի:

Խոհ սկզբնական մեղքը Եղամին յառաջացաւ, և ըստ այնու Եղամաւ մահ մատայաշխարհ, և Եղամաւ ամենեքին մեռանին¹), զի որպէս ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհ մաին, և ի մեզաց անափ մահ... որով ամենեքին մեղան . . . թագաւորեաց մահ յԵղամայ . . . , և ի վիրայ չցան-

ցուցելոյն, ըստ նմանութեան յանցուածոցն Ըգամայ . . . զի դատապահանն ի միոջէ յանցուածոյն անտի՝ ի դատապարտութիւն . . . — ապա ուրեմն որպէս միոյն յանցանօք յամենայն մարդիկ դատապարտութիւն, նոյնպէս և միոյն արդարութեամբն յամենայն մարդիկ արդարութիւն . . .²): — Եյս ինքն՝ պատուիրանազանց մեղսագործութիւնն⁵) Ըգամայ ընդդէմ կամաց Արարչին մերոյ Վատուծոյ⁴) անիծիւք պատժեց զնա մահուամբ⁵) ի մեղս, ընդ նմին և զշամայն սերունդան: Որով ամեն մարդ կծնի սիստեմէան (Ըգամային) մեղօք՝ ինչպէս կըրէ Դաւիթ, յղանայ անօրէնութեամբ և ծնանի ի մեղս⁶). Հետեաբար և ի մեղս մահուան դատապարտութեան ենթարկուած է անիծիւք:

(2) *Scand.* b. (2-18)

(3) σύνηρ. Ψ. 6:

(4) Eng. p. 17:

(5) *Gnq.*, f., 17-19 - *Gnq.*, u., 15 -
Laod., b., 12-17; *g.*, 23 - *l.*, *loqñd.*, *db.*,
 24-22; - *bqba*, *b.*, 4; - *laqma*, *b.*, 15;

(6) *Uniquif.* 7.

(*) Schenck, Dr. H., "Urgyberförförer till fanns i 1872 mäppan,

(1) U. *Unpublished*. *ibid.* 22.

Բայց Վստուածային նախախնամութեան շնորհ⁷⁾՝ անհուն գութ և մարդասիրութիւն յոզորմութիւն⁸⁾ շարժեցաւ մարդկային այնպիսի թշուառ. վիճակի համար, որ մի մարդոյ յանցանաց և մեղաց հետեւանք և գառն արգասիք եղաւ, և որպէս զի կրիին միով մարդով ամենեքեան արդարութեան արժանանան, համեցաւ իւր միակ և սիրելի որդին առաքել յաշխարհ⁹⁾), որ իր երկրորդ Եղամ¹⁰⁾ թշնամոյն յաղթելոյ և փոխարէնն արդարութիւն համափոելոյ աղագաւ՝ բնդունեց յանձն իւր աստուածային անիծիւք դատապարահալ մարդկային մարմինը¹¹⁾, զոր և աշխարհակեցոյց Խաչին և անպարտ պատուական Արեան¹²⁾ գերմարդկային սքանչելի արդեսմիք քաւեց և շնորհեց համայնատարած սրբութիւն և փրկութիւն։ Եւ ինչպէս Խնքն միանգամ մեռաւ և թաղեցաւ¹³⁾ վասն մարդկային բնութեան, պատուէր աւանդեց օրինակաւ անձինն՝ զի հաւատացեալք ևս մեռանելով մեղաց՝ թաղեն իւրեանց հին կեանքը կամ սկզբնական մեղքը՝ մլրտուելով ի Կրիստոս կամ ի

(7) *Sphur.* B. 11.

(8) *Brahma*, p. 4:

(9) Waq. Tr 4: - Loud. C. 3:

(10) U. *Unpublished*. Feb 45.

(11) 805. U. 44: — U. Spur. Q. 12, 16
— U. 805. Q. 2.

(42) *Bijm. B.* 5

(45) **Մաս.** իլ. 30 - 60: — **Մարդկ** ժե, 37
- 42: — **Լուկ** իՊ. 46 - 50: — **Յօհ** ժՊ. 50 - 40:
— **Գործ**. ժՊ. 29: — **Հաօմէ** ե. 6. Զ. 10. Ղ. 34:
ժՊ. 9: — Ը. **Կորիթ**. ժԵ. 5: — Բ. **Կորիթ**. ե.
15: — Ա. **Թես**. ե. 10:

մաշն՝ Փրկառոսի¹⁵), որպէս զի ի նոր հօգևոր կեանս վերանորոգ կենդանանան ընդունելով զառին սուրբ¹⁵) և զինքն — գրիստոս — զգենուն¹⁶):

Ուրեմն ԿԾը իստոնէական հաւատոյ մլջ
ամենայն աստուածային շնորհաց և խոր-
հրդոց նախագուռն է Արկրառութիւնն,
ևս նշան և կնիք՝ իրք զի նովաւ միայն կը
դրուին ի դպրութիւն Կինաց, կամ կը
վաւերանայ հաւատացելոյ դաւանութիւ-
նըն ի ԿԾիստոս և կամ ԿԾիստոնեայ
լինելն, միանդամոյն նուին երկելի և
զգալի խորհրդոց աներեսոյթ շնորհօք¹⁷⁾
կցնջուին սկզբնական մեղաց դատապար-
առութիւնը

Տ տեղի թրվատութեան հետ ուխտին՝¹⁸) — որ Խարայելացւոյն յայլազգեաց զանազանուելոյ սոսկ արտաքին նշանն էր ի մորմինն, — մեր Փրկիչ Հայուս Քրիստոս ինքն առհմանեց Վկրտութեան խորհուրդը, նախ անձամբ օրինակ ցցոյց ի Յորդանսն՝¹⁹), — յորում և ողին սուրբ իջու.²⁰), և և այրն Խստուած յայնեցաւ՝ ձայնիւ, Որդին՝ մարմնով, և և ողին սուրբ՝ ազաւնակիրապ, — միանդամայն պատուէր աւանդեց իւր աշակերտ առաքելոց և նոքօք համօրէն պաշտօնէից և հաւատագելոց Քրիստ, կրօնի

(14) *Znout.* 2. 5.

(15) Φ_{ηρδ.}, p. 58. Φθ., 5,

(16) Phiλ. Φ. 27,

(17) **S6o** 45pq **Ճանօթութիւնը:**

(18) *Onnq. dE.* 40-44 *Lp.* *Lp.*

(19) *Umar*, ♀, 45-46, — *Umarq*, ♂, 9, —
mlq, ♀, 24.

(20) *S'ru* 19pq *δωνοθητηθηλη* *κα θος.*

և Եշկեղեցւոյ՝ մկրտել յանուն ծօր և Արդւոյ և Հոգւոյն արթոյ²¹), և ի կնիք բանին յաւել, “Եթէ ոք ոչ ծնցի ի ջրոյ և ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յԵրքայութիւնն Եստուծոյ,²² ինչ պէս և Եռաքեալք ուսուցին և մատակարարեցին զՄկրտութիւնն²³):

Ըստ այսմ՝ որ մի անգամ ծնանի յարգանդէ մարմնաւոր՝ պարտ է զի միւսանգամ ծնանի և յարգանդէ Ա. Եւազանին²⁴) իմա ի Հոգւոյն. վասն զի առաջնով ստացած և կրած սկզբնական մեղաց անէծք և գատապարտութիւնք՝ երկրորդովս կջնջուին և հաւատացեալն կազատի, իբր զի ի մաշն Քրիստոսի մկրտուած՝ կվերածնի ի հոգեոր կեանս Քրիստ. հաւատոյ և կընծայուի յորդեղութիւն երկնաւոր ծօր Եստուծոյ²⁵):

Եպաքէն ով որ կհաւատայ ի Քրիստոս՝ նմա պարտ է մկրտիլ ի ջուր և ի Հոգին սուրբ:

Ակայն ոչ այնպիսի հաւատով և ըդգացմամբ՝ որպիսին էր հին ուխտի ժողովրդեանն յամա²⁶) և ի ծով²⁷), Կէմանայն ի Յորդանան²⁸) մարմնով լոկ

(21) Մատ. Էլ. 49. — Մարկ. Ժ. 2. 15.

(22) Յօհ. Գ. 5.

(23) Գործ. Բ. 58. 41. Բ. 12. 56. Թ. 18. Ժ. 47. Ժ. 2. 15. 55 Ժ. 4. Եթ. 46. — Երր. Զ. 2. — Հոօմ. Զ. 5. — Ա. Կորնթ. Ա. 14. — Եփես. Գ. 5. — Գաղ. Գ. 27.

(24) Տիր. Գ. 5.

(25) Հոօմ. Բ. 45. 47. — Գաղ. Գ. 5. 7. — Եփես. Ա. 5.

(26) Ելից. Ժ. 24. — Թու. Թ. 24.

(27) Ելից. Ժ. 22. — Ա. Կորնթ. Ժ. 2.

(28) Գ. Թագ. Ե. 14. — Պուկ. Պ. 27.

սրբուելով, որպէս Յովհաննու մկրտութեան խորհուրդն ևս միայն ապաշխարութեան համար էր²⁹):

Ա ամ զի Քրիստոնէական հաւատով Արքունիւնն ներքին հոգւեալ սրբագործ և էրիաբոր իունիւնը ունէ³⁰) թէ և ջրով կը կատարուի այն արտաքուստ, և հաւատով լուացեալ Փրիւ արքայի³¹) ինչպէս որ նովաւ գնեալ և ապրեալ են Քրիստոնեայք³²), մկրտեալն կմեռանի անիծից, ձրի թողութիւն կը գտանէ և շընորհիւ կիւնդանանայ և կարժանանայ Եստուծոյ որդեղորութեան՝ ըստ որում կը կդրէ Շնորհալին Կերսէս. “Յովհաննու մկրտութիւնն ապաշխարութիւն միայն էր, իսկ Քրիստոսի ոչ ապաշխարութիւն, այլ ձրի թողութիւն և շնորհիւ որդեղորութիւն,³³) ինչպէս նա և ժառանգակից Քրիստոսի³⁴) և ժառանգ հանգերձեալ կենացն³⁵) փառաց : Եռանց մկրտութեան՝ բացառութեամբ անակրնեկալ դիսպաց՝ չի՞ւ հաւատ և փրկութիւն. ըստ որում՝ առանց հաւատոյ անհնար է հաճոյանալ Եստուծոյ³⁶), ուրեմն և առանց մկրտութեան փրկին, վասն զի

(29) Մատ. Գ. 5. — Մարկ. Ա. 4. 5. — Պուկ. Գ. 5. — Գործ. Ժ. 24. Ժ. Թ. 4.

(30) Ա. Պետր. Գ. 21.

(31) Ա. Պետր. Ա. 19. — Երր. Թ. 14. Ժ. 19.

(32) Գործ. Ի. 28. — Ա. Պետր. Ա. 19. — Եպոտ. Ե. 9. — Ա. Կորնթ. Զ. 20. Ե. 25.

(33) Մեկն. Մատթ.

(34) Տես. 25 թ ծանօթութիւնը

(35) Տիր. Գ. 7.

(36) Երր. Ժ. Ա. 6.

«որ հաւատայ և մլրախցի՝ կեցցէ, և որ
ոչն հաւատայ դասապարանացի», 57):

Վասն որոյ՝ Հայաստանեայց Ա. և
Առաքելական Եկեղեցին՝ ըստ Հնաւանդ
և Հեռատես սովորութեան Եկեղեցւոյ՝
իւրաքանչիւր մանկան ծննդենէ մի քանի
օրերէ զիսի —, իսկ եթէ սախալուական ա-
ռիթէ հարկադրեալ է անմիջապէս
կփութայ ներկայացուցանել զերեխայն ի
Խորհուրդ Մկրտութեան, որ կարգա-
բանայ է սկզբանական հշաց զօրութեանական
հաւատավի Եկեղեցոյ: — Իսկ չափահար
պարաին նախ՝ ուսանել զհանգանակն հաւատայ,
հաւատալ ի ճշմարիտ Աս-
տուած ի սուրբ Երրորդութիւնն ի Հայր
և ՅՈՐԴի և ի Հոգին սուրբ, և ուսանիլ
ըստ չափու Քրիստոնեական ողարտաւո-
րութիւնքը խոստովանելով զմեղս և
ապաշխորելով 58), և ապա մլրտուիլ,
իւր զի սկզբանական և նէրդութանական մեղքե-
րէ մաքրուած՝ կարժանանայ մլրտութեան
ողարգեած երկնային շնորհաց:

Իսկ ինչպէս Քրիստոս մի անգամ մե-
ռաւ և յարեաւ, պարտ է զի Մկրտու-
թիւնն ևս միանգամ լինի 59)՝ եթէ մլր-
տեան անգամ է Առաքելական Բնդհա-

(57) Մարկ. Թ. 2. 46:

(58) Գործ. Բ. 38. — Էնդհ. Ընորհ:

(59) Քրիստ. Առաքելական և Ընդհանուր Ա.
Եկեղեցւոյ մէջ՝ առանգեալ է մի անգամ կատա-
րել Մկրտութեան խորհուրդը Քրիստոսի ճշմա-
րիտ հաւատը զաւանողաց վերաց զոր և առա-
քեալ կուսուցանէ (Եփիս. Դ. 5. .) Դ լինիլ Տէր,
Դ հուն և ՄՏ ՄԿՐՏԱՒԹԻՒՆ, ինչպէս նի-
կական հանգանակն ևս կքարողէ, թէ «Հաւա-
տամը և ի մի միայն Ընդհանուրական և Առաքելա-
կան Եկեղեցի, ի ՄՏ ՄԿՐՏԱՒԹԻՒՆ ելու»:

նուր Ար Առերբ Եկեղեցւոյ, և ըստ Ակ-
իրական Հանգանակին կդաւանի զԱ. Եր-

Մկրտութիւնն է գուռն ամենայն Խորհրդոց
Եկեղեցւոյ, ընդ որով կմտանեն իսախայցեալք
յԵկեղեցին Քրիստոսի, և թէպէտ ընդ այն շատեր
մուտ կգործենու բացց բաւական է մի գուռն զբ-
տանիլ ամեն մտանողաց համար:

Մկրտութիւնն է ի նշանակ մահուն Քրիստոսի,
իսկ Քրիստոս Դ անդամ Հոռու (Հոռ. Զ. 10.), ուս-
տի Առաքեալն կուսուցանէ թէ «Անհնար է մի
անգամ մլրտելոցն, որք ճաշակեցին յերկնաւոր
պարզեացն . . . և կործանեացին միւսանդամ՝
նորոգել յապաշխարութիւն, և վերստին ի խաչ
հանել անձանց զԱրզին Աստուծոյ ու:

Մկրտութիւնն է վերստին ծնունդ հոգեւոր, ու-
րով մարդ մեռանելով մեղաց՝ կմիրածնի ի նոր
հոգեւոր կեանս աստուածային չնորհաց ի Քրիստ.
հաւատս, իսկ ինչպէս ծնելոյն գարձեալ յորովայն
մեր մուանել և վերստին ծնանիլ անկարելի է,
այսպէս որ մի անգամ ծնեալ է յարգանդէ Մոր
Ա. Աւաղանին ջրով և Հոգւով՝ ոչ ևս կարող է
կրկին մտանել և ծնանիլ ոչ սկզբնական և ոչ
ներգործական մեղաց համար կհետեւ ուրիմն թէ՝
Դ է ուղիւն հունացոր, նայողէ և հոգւոր հանուն:

Աւրեմ Յցնք ընդէր կրկնեն Մկրտութիւնը
(կրկնամկրտութիւն առնել)՝ երբ պատահի Ընդհ.
Եկեղեցւոյ անգամներէն միոյն՝ լինել Յունական
եկեղեցւոյ անգամ:

Թողլով այժմ նոցա եկեղեցականաց յառաջ
բերած սնապարծ փաստերը և ինքնահնար ճա-
մարտակութիւնքը, — որ միշտ առաքելական Կա-
նոնաց և Քրիստ. Եկեղեցւոյ հիմնալիր մեր Քրիս-
Յիսուսի հրամանին հակառակ է, — կյիշենի աս-
տանօր միայն առաքելական Կանոնաց Ճժն կա-
նոնը թէ «Եպիսկոպոս կամ երեց, եթէ Ճշմար-
տութեամբ որ ունիցի զՄկրտութիւն, և վերստին
մլրտեաց զեա, կամ զպղծեալն յամբարշու-
թեանց մլրտեացէ, անկցէ յավակուուամթիւնն,
որպէս ծիծաղելով զիսաշիւ և զմահուակին ծեա-
ոլն»:

րորդութիւն, վասն զի մէ Տէր, մէ հասար և ՄԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ, որպէս շանգառ-

Յունաց եկեղեցականաց այսպէս չարաջար մուլտուիլը նոր չէ և այն ոչ առանց կրից և ոչ առանց քաղաքական նպատակաց: Թող մասնաւորի ակնարկութիւնս Հայոցս նկատմամբ: Միթէ Յոյնք քաջ չփառէին և համոզիալ չէին Հայոց ուղղափառ գաւանութեանց ի մասին: Կարի քաջ հմտացած էին, բայց կտքնէին մեր նախնեաց միամտութիւնը խանգարել և շրջանկատ հմտատեսութիւնը խսպառ վրիսեցնել, թէպէտ չյաջողէին՝ մինչեւ անգամ երբեմն Եզր կամուզիկոսի նման զոմանս ի մերացնոց խօրխորատի եզրը զրեթէ բոնադատեղով հասցնելով, ուստի առաւել բորբոքուած ի նախանձ և ատելութեան կրիւք կուրացած՝ չմնացին չարիք զրը ոչ զործեցին ընդ գէմ մեր ցարդի որով ինչպէս նա և այլ հակառակ զործերով և բանիւք իրութէ Հայոցս սրտից կամին կոկիծ պատճառել:

Եյ՞ մեր Ազգի քաղաքական անկմաննէն (4—500 թ. Փ.) զինի նորա պատեհ գտան իշխանութեան պատրուակաւ առաւել ընտելանալ մէջ՝ Հայոցս հետ, և խոստացան օգնել մեր հարստութեան վերականգնման: և այնպիսի ընթացքներ բոնեցին՝ որպէս զի Հայք ինքնին ստիպուին զիմել ի նոյն կեղծ կրօնական միութիւն, ևս մեր կարի ակար վիճակէն ոգեւորեալ ամեն հնաբք ի զործ կդնէին, մինչեւ անգամ երբեմն յայտնապէս կստիպէին զհայս՝ որ զիջանին կրօն. միութեան, Բայց երբ չյաջողէին, մեր կրօն. հաւատալեաց և զաւանութեանց մէջ մոլորութիւններ երևակայելով՝ մինչեւ Արիոսական ևս անուանել զհայս կյանքնէին, և պատճռառաւ իւլիք իմէնջ ուժացեալ և առ ինքեանս զիմուները կրին կմլրտէին և կմլրտնէն, ևս կ բուն նոցա բաղձանքներն և նպատակներն էին — ինչպէս և այլք սոյնպիսի ջանիւք կտքնէին և կտքնին, — տեսանել զհայս Յունական եկեղեցւոյ հետ միացեալ կամ ուրդապէս Յունացեալ, — որում մի փոքրիկ օրինակ թող լինի Պուղարաց նիրկայ անցքը որք մեղ նման քաղաքական հանգամանքներէ ստիպեալ՝ Յունացմէ օգնութիւն չինողբեն,

նախն ևս կը արողէ ու շաւատամբ և ի մի միայն Բնդհանրական . . Եկեղեցի, ի ՄԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ, և այլն:

Իսկ թէ զի՞նչ է մկրտութեան ձեր և բանիը, և ո՞ւր, և ի՞նչպէս կկատարուի Մկրտութեան արարողութիւնը, յաջորդ թուոյի:

(Հայութիւնիւն)

ԴԱՀՄԱՆ ՎԱՐԴԱԳԻՐԸ ՑԱՆԿԱԿԱՆ

այլ խրեանց աղասու եկեղեցին կաղմել և խրեանց լեզուաւ սրբածել զւառուած, եկեղեցական արարողութիւնքը, խրեանց եկեղեցին իւթեանք կառուափարել կանձկան և խնդիրն բազմածանօթ է, և ոչ երբէք ի հաւատոս մի առրիելութիւնն կմուծաննեն, և միանգամյն կպատուեն զՅոյնու բաց և այնպէս իրեւ հերետիկոս բանազրուեցան — :

Ապա ողջամիտք թողլ դասոն՝ եթէ ոք տարապարտուց հորս (Մատ. Ե. 22) անուանելով զիւրն եղբայր՝ զի հնին կդատապարտուի, հապա նորա ինչ գատապարտութեան արժանապէս կինթարկուին՝ որ Ընդհ. Եկեղեցւոյ մաոր կաղմուզ ամբողջ մի աղջը անարգելով՝ մալքեալ կերեակային և կրկնամկրտութեամբ կծաղրեն միանգամյն զՅիսուս Քրիստոս և զհայս սուրբ, որոյ համար կվճռէ Տիրական բանն, թէ մի թողցի նոցա մի յայսամ յաշխարհին և մի ի հանդերձելում (Մատ. ԺԲ 31.32. — Մարկ. Գ. 28, 29. — Ղուկ. ԺԲ. 10).

Անկատնիք՝ զի նոյնպիսեաց ի ձեռս Քրիստոնէութիւնն և աստուածային խորհուրդը ի խաղս դասուած, և նախատանաց և անհաւատից ծաղրածութեանց ենթակայացած են, թէպէտ ինչպէս միշտ և ցարդ՝ նոյնալիսին լեզուագարութեամիք խանգարելով Քրիստ. Արօնի պարզութիւնը, և շատ քաշկոտուք փաստեր կմուրան և կպատճառարաննեն իւթեանց քաղաքական նպատակները և ազգերը ունչացնելու տքնութիւններն պատրուակելոյ համար, և իրը թէ Քրիստ. Հաւատոյ նախանձախրնդիր են: Ուստի կմնայ ողջամտաց ի սիրտ և ի հոգի անշափ ցաւիլ իրեւ աշակերտ Քրիստոսի և նախանձախնդիր փառաց և պատուոյ Քրիստոնէութեան